ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 3

13.03.2025թ. ԿՆՔՎԱԾ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ N «ԴԴ-ՄԱԾՁԲ-25/09» ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան « 18 » դեկտեմբերի 2025թ.

Դատական դեպարտամենտը, ի դեմս ղեկավար Ն. Գալստյանի, որը գործում է Դատական դեպարտամենտի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ՀՀ ՆԳՆ կրթահամալիր» ՊՈԱԿ-ը, ի դեմս ռեկտոր Մ. Մուրադյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր), ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, պահպանելով գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պայմանները և հիմք ընդունելով 13.03.2025թ. կնքված N «ԴԴ-ՄԱԾՁԲ-25/09» պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 և 7.8 կետերը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր)՝ հետևյալի մասին.

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Հաշվի առնելով «ՀՀ ՆԳՆ կրթահամալիր» ՊՈԱԿ-ի համաձայնությունը՝ 131 անձի դասավանդման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման, Պայմանագրի գնի փոփոխության (նվազեցման), Պայմանագիրը մասնակի լուծելու վերաբերյալ.

1.1. Պայմանագրի 4.1 կետում «5 910 000 (հինգ միլիոն ինը հարյուր տաս հազար) ՀՀ դրամ» բառերը փոխարինել «748 600 (յոթ հարյուր քառասունութ հազար վեց հարյուր) ՀՀ դրամ» բառերով,

1.2. Պայմանագրի «ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ» վերտառությամբ N 1 հավելվածում «տեխնիկական բնութագիրը» սյունակում նշված «150 անձ» բառերը փոխարինել «19» անձ բառերով, իսկ «ընդհանուր (առավելագույն) գինը/ՀՀ դրամ» սյունակում «5 910 000» թիվը փոխարինել «748 600» թվով,

1.3. Պայմանագրի 31.03.2025թ. կնքված N 1 համաձայնագրի «ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ» վերտառությամբ N 1 հավելվածը հաստատել նոր խմբագրությամբ՝ համաձայն Համաձայնագրի N 1 հավելվածի:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Համաձայնագրում չնշված՝ Կողմերի՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3. Համաձայնագիրը կազմված է 3 էջից, կնքվում է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն համաձայնագրի N 1 հավելվածը հանդիսանում է Համաձայնագրի անբաժանելի մասը:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Դատական դեպարտամենտ	**«ՀՀ ՆԳՆ կրթահամալիր» ՊՈԱԿ**
Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1	Հասցե՝ ք. Երևան, Ծովակալ Իսակովի փ. 29
ՀՎՀՀ՝ 02583241	ՀՀՎՀ՝ 01361716
Հ/Հ՝ 900011039808	Հ/Հ՝ 900018005018
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Ղեկավար՝ Ն. Գալստյան	**Ռեկտոր՝ Մ. Մուրադյան**
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ	

Հավելված N 1
« 18 » դեկտեմբերի 2025թ. կնքված N 3 համաձայնագրի

(Հավելված N 1
« 31 » մարտի 2025թ. կնքված N 1 համաձայնագրի)

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության																
չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2025թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	ընդամենը
1	80551100/1	ուսուցման ծառայություններ անվտանգության ոլորտում			591000	748600	748600	748600	748600	748600	748600	748600	748600	748600	748 600

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Դատական դեպարտամենտ
Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1
ՀՎՀՀ՝ 02583241
Հ/Հ՝ 900011039808
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Ղեկավար՝ Ն. Գալստյան

(ստորագրություն)

Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
«ՀՀ ՆԳՆ կրթահամալիր» ՊՈԱԿ
Հասցե՝ ք. Երևան, Ծովակալ Իսակովի փ. 29
ՀՀՎՀՀ՝ 01361716
Հ/Հ՝ 900018005018
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Ռեկտոր՝ Մ. Մուրադյան

(ստորագրություն)

Կ.Տ